**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 06**

*Լերմոնտովո համայնքի ավագանու 2023 թվականի հուլիսի 17-ի նիստի.*

գ. Լերմոնտովո Համայնքի ղեկավարի աշխատասենյակ

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Էդիկ Համբարձումի Չախալյանը

**Մասնակցում էին՝**

Համայնքի ավագանու անդամներ՝ Վիտալի Ասադովը, Բոլոտին Իվանը, Քրիստինե Խառատյանը, Անդրեյ Կորոլյով, Վասիլի Կորոլյովը; համայնքապետարանի աշխատակիցները:

**ՆԻՍՏԸ** - Էդիկ Չախալյանը ժամը 11:30-ին նիստը հայտարարեց բացված:

**Նիստը վարողն առաջարկեց հաստատել օրակարգը:**

**Կողմ՝ 5, դեմ՝ 0 ընդունվեց որոշում**:

**Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.**

**Հաստատված օրակարգը՝**

1.Լերմոնտովո համայնքի 2022 թ-ի դեկտեմբերի 19-ի "Լերմոնտովո համայնքի 2023 թ-ի բյուջեն հաստատելու մասին" թիվ 43 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ.Մ.Բոլոտինա

2.Լերմոնտովո համայնքի ղեկավարի 2023 թ-ի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման մասին:

զեկ.Մ.Բոլոտինա

3.Լերմոնտովոյի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, համայնքապետարանի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

զեկ.Ա.Հարությունյան

4.Լերմոնտովո համայնքի հողային հաշվեկշիռը հաստատելու մասին

զեկ.Ա.Գալուստյան

**ԸՆԹԱՑՔԸ՝**

1. **<u>ԼՍԵՑԻՆ</u>** - Լերմոնտովո համայնքի 2022 թ-ի դեկտեմբերի 19-ի "Լերմոնտովո համայնքի 2023 թ-ի բյուջեն հաստատելու մասին" թիվ 43 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին նախագիծը

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ Մարիյա Բոլոտինան: Նա ներկայացրեց 2023 թ-ի բյուջեում փոփոխությունների անհրաժեշտությունը, ներկայացրեց նախագիծը՝ ըստ հատվածների և նախահաշիվների: Տեղի ունեցան քննարկումներ՝ հարցերին պատասխանեցին՝ համայնքի ղեկավարը և առաջատար մասնագետ-հաշվապահը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 5, ընդունվեց որոշում: /N16/**

2. **ԼՍԵՑԻՆ** - Լերմոնտովո համայնքի 2023 թ-ի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման մասին որոշման նախագիծը

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ Մարիյա Բոլոտինան: Նա ներկայացրեց 2023 թ-ի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման մասին հաշվետվությունը: Ավագանին հաշվետվությունը ընդունեց ի գիտություն:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 5, ընդունվեց որոշում: /N17/**

3. **ԼՍԵՑԻՆ** - Լերմոնտովոյի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, համայնքապետարանի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին որոշման նախագիծը

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Անահիտ Հարությունյանը, որը ներկայացրեց, որ օրենքի դրույթների փոփոխությունների հետ կապված վարչական ղեկավարի պաշտոնը հանդիսանում է համայնքային: Ուստի անհրաժեշտ է հաստիքացուցակում կատարել համապատասխան ուղղում:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 5, ընդունվեց որոշում: /N18/**

4. **ԼՍԵՑԻՆ** - Լերմոնտովո համայնքի հողային հաշվեկշիռը հաստատելու մասին որոշման նախագիծը:

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Արտյոմ Գալուստյանը, որը ներկայացրեց համայնքի հողային հաշվեկշիռը՝ համապատասխան փոփոխություններով:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 5, ընդունվեց որոշում: /N19/**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ______ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ

1.ԱՍԱԴՈՎ ՎԻՏԱԼԻ

2.ԲՈԼՈՏԻՆ ԻՎԱՆ

3.ԽԱՌԱՏՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

4.ԿՈՐՈԼՅՈՎ ԱՆԴՐԵՅ

4.ԿՈՐՈԼՅՈՎ ՎԱՍԻԼԻ